

**ԱՃՈՒՐՂԻ ՄԱՍԻՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՅՈՒՄ**

**ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՍՏՂԱԶՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՂԵՏԱՐԱՆԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՂԻՄԱՅՈՂ 05-013-0021-0005 ԵՎ 05-013-0033-0003 ԿԱՂԱՍՏՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ՝ ԼՈՏԵՐԻ ԱՃՈՒՐՂ**

Աճուրդը կկայանա 2019թ. հունիսի 17-ին ժամը 9:00-ին, Աստղաձորի համայնքապետարանի վարչական շենքում, Արցախյան ազատամարտիկների 4 հասցեում: Աճուրդն անցկացվում է բաց ձևով, դասական եղանակով: Աճուրդի է ներկայացվում բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասեր համապատասխան մեկնարկային գնով, աճուրդային քայլի չափով և նախավճարի գումարով:

Լոտ	Հողամասի կադատրային ծածկագիրը	Հողամասի նպատակային նշանակությունը	Հողամասի գործառնական նշանակությունը կամ հողատեսքը	Հողամասի հասցեն	Հողամասի չափը (հեկտար)	Աճուրդում հողամասի մեկնարկային գինը ՀՀ դրամ	Աճուրդային նվազագույն քայլի չափը ՀՀ դրամ	Աճուրդի նախավճարի չափը ՀՀ դրամ
1	05-013-0021-0005	Բնակավայրերի	Բնակելի կառուցապատման	գ. Աստղաձոր 72 փողոց 10	0.1073	238206	11910	11910
2	05-013-0033-0003	Բնակավայրերի	Բնակելի կառուցապատման	գ. Աստղաձոր 64 փողոց 1	0.0647	143634	7182	7182

*Աճուրդի մասնակցության վճար է սահմանվել 2000 ՀՀ դրամ:*

Աճուրդին մասնակցել ցանկացողները մինչև 2019թ. հունիսի 13-ը ժամը 16:00-ն Աստղաձորի համայնքապետարան ներկայացնեն համապատասխան լոտի համար մասնակցության հայտ, մասնակցության վճարի անդորագիրը և անձնագիրը:

Լոտերի նկատմամբ սահմանափակումներ չկան, լոտերի հարևանությամբ անցնում են ընդհանուր օգտագործման ներհամայնքային ճանապարհներ, էլ. հաղորդման գծեր, գազատար խողովակներ, խմելու ջրագծեր:

Աճուրդում հաղթողը որոշվում է ամենաբարձր գին առաջարկած մասնակցիցը, լոտերի վաճառքը կատարվում է ըստ հերթականության:

Աճուրդում հաղթած մասնակցիցը պարտավոր է 10 օրվա ընթացքում վճարել սակարկության արդյունքում ձևավորված գինը ներառված նախավճարի գումարը:

Լոտի ուսումնասիրության ցանկություն ունենալու դեպքում աճուրդի հնարավոր մասնակցիցը կարող է մինչև 2019թ. հունիսի 7-ը ժամը 16:00-ն դիմել Աստղաձորի համայնքապետարան: Աճուրդի կանոնակարգին կարող են ծանոթանալ Աստղաձորի համայնքապետարանում: Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել Աստղաձորի համայնքապետարան կամ զանգահարել 094-49-35-46 հեռախոսահամարով:

Համայնքի ղեկավար, աճուրդի կազմակերպիչ՝

Ռ. Խաչատրյան